ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- փետրվարի 2025 թվականի №--Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի №397Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2024 թվականի փետրվարի 7-ի հայտով «ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով երկարաձգել Հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 24-ի №397Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված՝ «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0623 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0623 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2025 թվականի հունիսի 1-ը,

բ) Ընկերությունը հայտնել է, որ Հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 27-ի №381Ա որոշմամբ ԼԷ №0623 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգվել էր մինչև 2025 թվականի մարտի 1-ը, որպեսզի Ընկերությունն ունենա բավարար ժամանակ, Հայաստանի Հանրապետության կիրառելի օրենքների և կարգավորումների համաձայն, Կայանի կառուցման աշխատանքների ավարտը փաստաթղթավորելու և Կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման հայտով Հանձնաժողով դիմելու համար,

Ընկերությունը տեղեկացրել է, որ Կայանը ներկայումս լիովին գործում է և միացված է բաշխման ցանցին ամբողջ հզորությամբ: Կայանը սկսել է էլեկտրական էներգիա արտադրել 2024 թվականի դեկտեմբերի 15-ից: Հայաստանի Հանրապետության

կառավարության և Ընկերության միջև 2020 թվականի հունիսի 26-ին կնքված՝ Փոփոխված և վերաշարադրված կառավարության աջակցության համաձայնագրի 7.3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կիրառելի օրենքների և կանոնակարգերի պահանջներին համապատասխան շահագործման հանձնելու փորձարկումների ավարտից հետո ընդունող հանձնաժողովը պետք է անհապաղ ստորագրի ընդունման ակտը կամ առարկություն ներկայացնի՝ նկարագրելով այն խնդիրները, որոնք պետք է լուծվեն:

Ընկերությունն ավարտել է շահագործման հանձնելու փորձարկումները և ընդունող հանձնաժողովի ուսումնասիրությանն է ներկայացրել անհրաժեշտ կառուցապատման փաստաթղթերը: Ընդունող հանձնաժողովի անդամները, ի պատասխան Ընկերության 2025 թվականի հունվարի 9-ի հրավերի, 2025 թվականի հունվարի 14-ին այցելել են ծրագրի տարածք՝ հաստատելու շինարարական աշխատանքների ավարտը և իրականացնելու գործողություններ կայանի ընդունման նպատակով:

Ընկերության դիմումի ներկայացման դրությամբ ընդունող հանձնաժողովի բոլոր անդամները, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի (այսուհետ՝ Վարդենիսի համայնքապետարան) և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Գեղարքունիքի տարածքային բաժնի (այսուհետ՝ տարածքային բաժին) ներկայացուցիչների, ստորագրել են ակտը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 15-ի №596Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների տրամադրման կարգի 154-րդ կետին համապատասխան՝ տեսչական մարմնի տարածքային բաժինը ՀՀ օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասության սահմաններում տալիս են եզրակացություն՝ ստորագրելով ընդունող հանձնաժողովի ակտը՝ հավաստելով ավարտված շինարարական աշխատանքների համապատասխանությունը հաստատված նախագծային փաստաթղթերին, տրամադրված տեխնիկական պայմաններին և այդ կարգի պահանջներին՝ դիմումն ստանալու օրվանից 5-օրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար:

Ընդունման ակտի չստորագրելը Վարդենիսի համայնքապետարանի և տարածքային բաժնի ներկայացուցիչների կողմից դեռևս չի հիմնավորվել՝ հաշվի առնելով, որ Վարդենիսի համայնքապետարանը գրավոր առարկություն չի ներկայացրել, իսկ տարածքային բաժնի ներկայացուցչի համար սահմանված ստորագրման հինգօրյա ժամկետը լրացել է:

Ընկերությունը նշել է նաև, որ ընդունման ակտի ստորագրումն ավարտական ակտի ստորագրման, Կայանը կազմող ակտիվների գրանցման և հետագայում Հանձնաժողովի կողմից Կայանի համար սակագնի սահմանման նախապայման է:

Ընկերությունը գրությամբ հղում է կատարել նաև Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետին, համաձայն որի՝ այդ կարգի իմաստով ֆորս մաժոր են համարվում պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ այլ իրավասու կազմակերպության ակտը, գործողությունը կամ անգործությունը այն դեպքում, երբ դրա արդյունքում չի տրամադրվել, երկարաձգվել սույն կարգով ամրագրված պարտավորության կատարման համար անհրաժեշտ որևէ թույլտվություն կամ իրավունք կամ խոչընդոտվել է այդ պարտավորության կատարումը, պայմանով, որ լիցենզավորված անձը գործել է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության: Հետևաբար, Ընկերության գնահատմամբ Վարդենիսի համայնքապետարանի և տարածքային բաժնի ներկայացուցիչների կողմից ընդունող հանձնաժողովի ակտը չստորագրելը Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխան հանդիսանում է ֆորս մաժոր:

Արդյունքում Ընկերությունը խնդրել է նկարագրված ֆորսմաժորային իրավիճակի պատճառով երկարաձգել ԼԷ №0623 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը մինչև 2025 թվականի հունիսի 1-ը:

գ) Ընկերությունն ի լրումն հայտի, 2025 թվականի փետրվարի 18-ի գրությամբ հայտնել է, որ «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանի կառուցման ծրագրի իրականացման նպատակով էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0623 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածում ընկերությունն ավարտական ակտ ստանալու նպատակով սույն թվականի հունվարի 21-ից փորձում է թվայնացնել իր համապատասխան կառուցապատման թույլտվությունները urban.e-gov.am համակարգի միջոցով, սակայն բախվում է դժվարությունների համակարգի թերությունների պատճառով, այդ թվում՝ մերժումների մասին պատշաճ չի ծանուցվում, համակարգում լրացման ենթակա որոշակի տողեր բացակայում են կամ լրացման դեպքում չեն արտացոլվում/պահպանվում, բացակայում է հողի էներգետիկ գործառնական նշանակության տարբերակը, ինչպես նաև առկա են համակարգի հետ կապված այլ խնդիրներ: Ընկերությունը նախօրոք չի ծանուցվել համապատասխան կառուցապատման թույլտվությունները թվայնացնելու

անհրաժեշտության մասին, այնինչ ավարտական ակտ ստանալու նպատակով դիմում հնարավոր է ներկայացնել բացառապես urban.e-gov.am համակարգի միջոցով՝ միայն մյուս կառուցապատման թույլտվությունները թվայնացնելուց հետո: Վերոնշյալով պայմանավորված ընկերությունը ԼԷ №0623 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածում չի կարողացել ավարտին հասցնել «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանի կառուցումը, որպիսի հանգամանքները ընկերության գնահատմամբ՝ №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխան հետևանք են ֆորս մաժորի:

դ) Հիմք ընդունելով Կարգի 81.2-րդ կետը՝ Հանձնաժողովը 2025 թվականի փետրվարի 20-ի №ՄՄ/34.1-Մ2-4/750-2025 գրությամբ դիմել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ Ընկերության հայտով հայցվող ժամկետի երկարաձգման վերաբերյալ վերջինիս դիրքորոշումը ստանալու նպատակով,

ե) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն իր 2025 թվականի փետրվարի 21-ի №ԴԽ/22.2/6000-2025 գրությամբ՝ հաշվի առնելով «ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերության և «Ֆոտովատիո Ռենյուաբլ Վենչրս» Էս. Էլ.-«Էֆէսէլ Սոլար» Էս. Էլ.-ի միջև 2020թ. հունիսի 20-ին կնքված՝ «Հայաստանում՝ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքում «Մասրիկ-1» արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանի (Կայանի) նախագծման, ֆինանսավորման, կառուցման, սեփականության իրավունքով տիրապետման և շահագործման մասին փոփոխված և վերաշարադրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության աջակցության համաձայնագրի 6.2 կետը՝ չի առարկել, որ «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0623 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգվի մինչև 2025 թվականի հունիսի 1-ը:

զ) Ի հավելումն 2025 թվականի փետրվարի 7-ի և փետրվարի 18-ի գրությունների, փետրվարի 21-ի գրությամբ Ընկերությունը տեղեկացրել է նաև, որ ավարտական ակտ ստանալու նպատակով urban.e-gov.am համակարգի միջոցով Ընկերության մյուս բոլոր կառուցապատման թույլտվությունները թվայնացնելու հետ կապված խնդիրները շարունակվում են: Ընկերությունը չի կարողանում թվայնացնել շինարարական աշխատանքները սկսելու մասին տեղեկանքները, քանի որ համապատասխան տեղեկանքները թվայնացնելու դիմումում փաստացի լրացված որոշ դաշտեր չեն պահպանվում և արտացոլվում Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի էջում: Նշված տեխնիկական խնդիրը վերացնելու հնարավորություն Ընկերությունը չունի,

քանի որ կայքը մշակվել և սպասարկվում է Vxsoft ընկերության կողմից, որը քաջատեղյակ է խնդրի մասին: Չնայած վերոնշյալ հանգամանքների առկայությանը՝ Ընկերությունը 2025 թվականի փետրվարի 17-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարան է ներկայացրել ավարտական ակտ ստանալու դիմումը՝ նաև էլեկտրոնային փոստի միջոցով, սակայն դեռևս պատասխան չի ստացել: Ընկերությունը մշտական կապի մեջ է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Քաղաքաշինության կոմիտե), Վարդենիսի համայնքապետարանի և Vxsoft ընկերության հետ, սակայն հարցը դեռևս չի կարգավորվել:

Ընկերությունը չի կարող գնահատել նաև կառուցապատման թույլտվությունները թվայնացնելու պահանջի չկատարման հետևանքների տևողությունը, քանի որ urban.e-gov.am տեխնիկական խնդրի լուծումը ենթադրում է ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ընկերության աշխատանք և դուրս է Ընկերության վերահսկողությունից: Ընկերությունն ավարտական ակտը ստանալու նպատակով բացի շինարարական աշխատանքներն սկսելու մասին տեղեկանքները թվայնացնելուց, պետք է թվայնացնի նաև ընդունման ակտը և դեռևս չի կարող գնահատել, թե ինչ հետագա խնդիրներ կարող են առաջանալ տվյալ համակարգում: Քաղաքաշինական կոմիտեն հրապարակել է կառուցապատման թույլտվությունների թվայնացման ժամկետների վերաբերյալ իրազեկում, որում նշվում է, որ եթե թղթային թույլտվությունների թվայնացմամբ պայմանավորված հնարավոր չէ հաջորդող փուլերի դիմումները urban.e-gov.am համակարգով ներկայացնել կիրառելի ժամկետներում, ապա հաջորդող փուլերի համար դիմումի ամսաթիվ կհամարվի նախագծման թույլտվության թվայնացման դիմումի ներկայացման օրը: Այսինքն՝ ժամկետի խախտում չի արձանագրվի, քանի որ համակարգը բարելավելու աշխատանքներն ընթացքի մեջ են, իսկ Կոմիտեն շարունակաբար կազմակերպում է քաղաքաշինական թույլտվությունների տրամադրման նպատակով urban.e-gov.am թվային հարթակից օգտվողների հետ քննարկումներ՝ բարելավելու համակարգի միջոցով գործընթացի կազմակերպումը: Ընկերությունը կրկին հայտնել է, որ ավարտական ակտի տրամադրման ձգձգումը հավասարազոր է ֆորսմաժորային իրավիճակի:

է) Ի հավելումն 2025 թվականի փետրվարի 7-ի, փետրվարի 18-ի և փետրվարի 21-ի գրությունների, Ընկերությունը փետրվարի 24-ի գրությամբ տեղեկացրել է, որ Ընկերությունը Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանից պատասխան է ստացել՝ էլեկտրոնային փոստի միջոցով Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարան

ներկայացված՝ ավարտական ակտ ստանալու համար դիմումի վերաբերյալ, որով Վարդենիսի համայնքապետարանը տեղեկացնում է, որ չի կարող հաստատել ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու թղթային տարբերակները, քանի որ 2025 թվականի հունվարի 1-ից ձևավորվել է էլեկտրոնային նոր համակարգ (Վարդենիսի համայնքապետարանի 2025 թվականի փետրվարի 24-ի թիվ 0585 գրությունը կցվել է):

ը) «Էներգետիկայի մասին» օրենքի 26-րդ հոդվածի՝

• 2-րդ մասի համաձայն, ի թիվս այլնի, էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգվելու դեպքում երաշխիքային գումարը Հանձնաժողովի սահմանած կարգով և չափով ենթակա է փոխանցման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

թ) Կարգի №3 հավելվածի՝

• 7-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե Հանձնաժողովը որոշում է ընդունել արտադրության լիցենզիայով սահմանված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգելու մասին,

• 10-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը Կարգով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի: Կարգի իմաստով ֆորս մաժոր է համարվում ցանկացած հանգամանք կամ դեպք (դրա հետևանք), որը հանգեցրել է (հանգեցնում կամ կարող է հանգեցնել) լիցենզավորված անձի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին՝

1) չի գտնվում լիցենզավորված անձի վերահսկողության ներքո.

2) լիցենզավորված անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար.

• 10.1-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը ենթակա է հիմնավորման լիցենզավորված անձի կողմից,

ժ) Ընկերության կողմից ներկայացված գրություններով հայտնված դիրքորոշումների և Վարդենիսի համայնքապետարանի 2025 թվականի փետրվարի 24-ի թիվ 0585 գրության

հաշվառմամբ ԼԷ№0623 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի երկարաձգման հայտը ենթակա է բավարարման, իսկ դրա հետևանքով երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չփոխանցելու հիմքերը բացակայում են:

Այսպես, Կարգի համաձայն՝ լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը Կարգով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի, իսկ լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը ենթակա է հիմնավորման լիցենզավորված անձի կողմից:

Տվյալ դեպքում Ընկերությունը որևէ կերպ չի հիմնավորել Կայանի կառուցման՝ իր պարտավորության չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը: Մասնավորապես՝ թեև Ընկերությունն իր գրությունների հիմքում դրել է որոշակի փաստարկներ, այն է՝

- Ընկերության դիմումի ներկայացման դրությամբ ընդունող հանձնաժողովի բոլոր անդամները, բացառությամբ Վարդենիսի համայնքապետարանի և տարածքային բաժնի ներկայացուցիչների, ստորագրել են ընդունման ակտը.

- Ընկերությունը նախօրոք չի ծանուցվել համապատասխան կառուցապատման թույլտվությունները թվայնացնելու անհրաժեշտության մասին, այնինչ ավարտական ակտ ստանալու նպատակով դիմում հնարավոր է ներկայացնել բացառապես urban.e-gov.am համակարգի միջոցով.

- լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածում ընկերությունն ավարտական ակտ ստանալու նպատակով սույն թվականի հունվարի 21-ից փորձում է թվայնացնել իր համապատասխան կառուցապատման թույլտվությունները urban.e-gov.am համակարգի միջոցով, սակայն բախվում է դժվարությունների համակարգի թերությունների պատճառով.

այնուամենայնիվ, Ընկերությունը չի ներկայացրել իր փաստարկները հիմնավորող որևէ ապացույց: Մասնավորապես, չի ներկայացրել ապացույցներ ինչպես urban.e-gov.am համակարգի՝ կոնկրետ ժամանակահատվածում տեխնիկական այնպիսի խնդիրների առկայության մասին, որոնք խոչընդոտել են Կայանի կառուցման՝ իր պարտավորության կատարմանը, այնպես էլ իր կողմից այդ խոչընդոտները կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար ձեռնարկված բոլոր անհրաժեշտ միջոցների և ջանքերի

(այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) վերաբերյալ :

Ինչ վերաբերում է Ընկերության այն փաստարկին, որ Վարդենիսի համայնքապետարանի և տարածքային բաժնի ներկայացուցիչների կողմից ընդունող հանձնաժողովի կողմից չստորագրելը Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխան հանդիսանում է ֆորս մաժոր, ապա հարկ է փաստել, որ Ընկերությունը ո՛չ փաստարկներով, ո՛չ էլ որևէ ապացույցի ներկայացմամբ չի հիմնավորել այն հանգամանքը, որ ինքը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար:

Ավելին՝ Ընկերությունն ինքն է հայտնել, որ ընդունման ակտի չստորագրելը Վարդենիսի համայնքապետարանի և տարածքային բաժնի ներկայացուցիչների կողմից դեռևս չի հիմնավորվել, և չի հայտնել թե ինչպիսի այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված ջանքեր է գործադրել չստորագրելու պատճառները պարզելու, դրանք վերացնելու ուղղությամբ, որպիսի բավարար ջանքերի առկայության դեպքում միայն կարող էր հաստատվել ենթադրյալ ֆորս մաժորի առկայությունը:

Անդրադառնալով Ընկերության այն փաստարկին, որ լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածում ընկերությունն ավարտական ակտ ստանալու նպատակով սույն թվականի հունվարի 21-ից փորձում է թվայնացնել իր համապատասխան կառուցապատման թույլտվությունները urban.e-gov.am համակարգի միջոցով, սակայն բախվում է դժվարությունների համակարգի թերությունների պատճառով, հարկ է փաստել, որ Ընկերությունը կրկին բավարարվել է միայն դիրքորոշում ներկայացնելով՝ չներկայացնելով որևէ ապացույց ինչպես իր կողմից նշված գործողությունները կատարված լինելու, այնպես էլ այդ ժամկետից ավելի վաղ այդ գործողությունները կատարելու անհնարինության վերաբերյալ:

Այսպիսով, Ընկերությունը որևէ կերպ չի հիմնավորել թվարկված հանգամանքների առկայությունը և դրանց ուղղակի առնչությունը լիցենզիայով ամրագրված՝ Կայանի կառուցման պարտավորության կատարման անհնարինության հետ, նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար բոլոր անհրաժեշտ միջոցներն ու ջանքերը ձեռնարկելու հանգամանքը, չի հիմնավորել, որ ինքը՝ գործելով օրենսդրության համաձայն, սահմանված ժամկետում

Կայանի կառուցման աշխատաքներն ավարտին չի հասցրել պետական մարմնի կամ այլ կազմակերպության գործողության կամ անգործության հետևանքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում, իսկ Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 10.1-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը ենթակա է հիմնավորման լիցենզավորված անձի կողմից:

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 26-րդ և 30-րդ հոդվածները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, (այսուհետ՝ Կարգ), այդ թվում՝ Կարգի 78-րդ, 81.2-րդ կետերը, Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը, 8-րդ կետը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2025 թվականի փետրվարի 21-ի №ԴԽ/22.2/6000-2025 գրությունը, Ընկերության 2024 թվականի փետրվարի 7-ի հայտը, և ի լրումն փետրվարի 18-ի, 21-ի և 24-ի գրությունները, Հանձնաժողովը որոշում է.

1. Երկարաձգել Հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 24-ի «ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերությանը «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №397Ա որոշմամբ «ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0623 լիցենզիայով ամրագրված «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը՝ ճշգրտելով նաև արտադրության ժամանակահատվածը, նշված որոշման մեջ՝ «մինչև 2025 թվականի մարտի 1-ը» թվերը և բառերը փոխարինելով «մինչև 2025 թվականի հունիսի 1-ը» թվերով և բառերով.

2. Ընկերությանը՝ ԼԷ №0623 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «Բիբլոս Բանկ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի սեպտեմբերի 17-ի №1214 գրությամբ Հանձնաժողով ներկայացված, 2020 թվականի նոյեմբերի 30-ի №1549, 2022 թվականի հունիսի 30-ի №826, 2023 թվականի սեպտեմբերի 29-ի, 2024 թվականի օգոստոսի 15-ի №1337 և 2024 թվականի դեկտեմբերի 18-ի №2383 գրություններով գործողության ժամկետը երկարաձգված ԲԲԱ05/2018 երաշխիքի համաձայն երաշխավորված 137 500 000 (հարյուր երեսունյոթ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարից 68 750 000 (վաթսունութ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 137 500 000 (հարյուր երեսունյոթ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2025 թվականի հուլիսի 16-ը գործողության ժամկետով:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի մարտի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
-- փետրվարի 2025թ.